ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«29» ապրիլի 2022թ.
No Շ/392-2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ

Առանձին տեսակի ապրանքների
դասակարգման վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներն իրականացնելու նպատակով և ի կատարումն Մաքսային միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 30.12.2020թ. թիվ 35/11, 35/12, 35/13 և 35/22 որոշումների՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն պարզաբանում է հետևյալը.

1. Երրորդական ալկիլամինների խառնուրդը՝ բաղկացած N,N-դիմեթիլդոդեկանամինից (50 -70 %) և N,N-դիմեթիլտետրադեկանամինից (30 -50 %), N,N-դիմեթիլոտկադեկանամինի, N,N-դիմեթիլտրիդեկանամինի, N,N-դիմեթիլպենտադեկանամինի, N,N-դիմեթիլհեքսադեկանամինի աննշան պարունակությամբ, որը չունի մակերևութաակտիվ նյութերի հատկություններ, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 3824 ապրանքային դիրքում:

2. Կոկոսի (հնդընկույզի) սուբստրատը, որն իրենից ներկայացնում է հումքի տեսքով կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի և կեղևից առանձնացված կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի (մանրաթելի մանր մասերը) խառնուրդ՝ սեղմված գորգերի տեսքով, չենթարկված այնպիսի մշակման, որն ընդգծում է դրա՝ որպես մանածագործական նյութի օգտագործումը և որն օգտագործվում է տարբեր բույսերի (հիմնականում խոնավասեր) աճեցման համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 1404 ապրանքային դիրքում:

3" Ուլտրաձայնային տվիչը՝ նախատեսված բացառապես տրանսպորտային միջոցի կայանման համակարգի կազմում օգտագործման համար, որն իր մեջ ներառում է ուլտրաձայնային ճառագայթիչ և արտացոլված ազդանշանի ընդունիչ՝ ներկառուցված մեկ իրանում, կոնտակտային խմբով և ամրացման սեղմակներով, որը ձևավորում և կայանման համակարգի կառավարման բլոկին է փոխանցում ազդանշանի էլեկտրական հաճախականության պարամետրեր պարունակող, տվիչի և խոչընդոտի միջև ուլտրաձայնային ալիքների անցկացման ժամանակն արտացոլող տեղեկատվություն, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8512 90 900 ստորաենթադիրքում:

4" Մանրածախ վաճառքի համար փաթեթավորված պատկերի ստացման խաղալիքային պլաստիկ գրատախտակը, որտեղ պատկերը ստացվում է լրակազմի մեջ մտնող հատուկ գրիչ-ստիլուսի և գրատախտակի մեջ գտնվող մագնիսային փոշին էկրանին ձգող տպագրերի օգնությամբ՝ համալրված պատկերի հեռացման լծակով, և որի իրանում առկա են տպագրերի և գրիչ-ստիլուսի պահպանման ակոսներ, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 9503 00 700 0 ստորաենթադիրքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
Մ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

4/29/2022

X

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769 ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կատ.՝ ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժին

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am